

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ *)

Սիրելի եղբայր, Գէորգ,

Կարելի է դու ինձ սպասում կ'լինէիր անցեալ ամոի 15-ին. իմ գործը այնպէս չի գնաց. ես յետ աւարտելուս քննութիւնը ամենակին չիկարողացայ գալու, ինչու որ չէի կարող իմ գծուծ տնտեսութեան համար աւելորդ համարել մի քանի տասնեակ մանէթներ, և այդ պատճառաւ քու բաղցը տեսութիւնն ակամայ զոհեցի ծանր տաղտկութեան մայրաբաղաքիս, Բայց ես դիպուած գտայ և գնալու եմ այս օրերս սահմանից դուրս մինչև Նիցցա, 'ի հարկէ Գերմանիա և Գալիա ևս և իմ ուղևորութիւնը կ'տեսի (գուցէ) ամիս ժամանակ: Ուղարկեց քեզ Իզմիրեանը իմ նոր մարսէլինեզը, որ յատկարար ինսդրել էի որ քեզ հասցնէր: Վարդան, կամ տուր Յովհաննէս եղբօրս, կամ անյապաղ ուղարկէ Կռունկի խմբագրատունն: Ինձանից ամենին շատ բարեւ:

Մնամ մտերիմ բարեկամ քու Ռափիսյէլ

1861, փետրուարի 3-ին

Ս. Գետերբուրգ:

Ամենապատուական եղբայր և բարեկամ

Շնորհաւորում եմ 'ի բոլոր սրտէ յաջողութեամբ քննութիւնդ աւարտելող. բայց այդ մասին քու գրելը արդէն անագան էր, ինչու որ՝ պը. Ֆիդանեանը արդէն մեզ ծանուցել էր: Աստուծով ես յոյս ունիմ ուսումնական ճառդ պաշտպանելու ներկայ կ'գտնուիմ Մոսկ. համալսարանումն և աչքովս կը տեսնեմ քու փառքը:

Շնորհակալ եմ յուսադրիչ նամակիդ համար. ես այլ ազգ չէի կարող ակնունել քեզանից. ես գիտէի որ դու, եթէ մոռացած էլ լինէիր, չի պիտի տևողական լինէր: Իմ գալս այդ-

*) Տես «Մուրճ» № 8.

տեղ արդէն կարի հարկաւոր է լինում. ինչու որ տէրութեսիցն ես թոյլտուութիւն ստացայ «Հիւսիս» անունով օրագիր հրատարակելու, որ գալիս, 'ի հարկէ, իրաւունքս կը բերեմ այդտեղ և եղայր ուսանողներիս մեծապէս նիւթապէս կը շահեցնեմ:

Խորհուրդ ես տալիս կանդիդատութիւն ևս ստանալու. եղայր, եթէ ճնար ունենամ կանեմ, բայց որ ասում ես կարի հարկաւոր է՝ այդ ինձ մոլորեցնում է. բայց ես այնքան չեմ երկնչում, վասն զի այժմ կողմնակի կամ օգնական առարկաներիցն ազատ լինելուց, յոյս ունեմ զիարդ և իցէ ընկճել և այդ: Ի՞նչ ասել կ'ուզէ, եթէ այդ աստիճանն ստանած՝ կ'ջանամ մի օրինաւոր շարադրութիւն գրելու հայոց դպրութեան վերաբերած:

Եւ անցեալ գրումս քեռորդուս (Քառաքաշի) մասին խնդրել էի և դու մոռացար ինձ միամտացնելով՝ միամտացնել տալ նորա հօրն ու մօրը. ինչ որ խնդրել էի, 'ի սէր Աստծոյ, քանի մի տողով պատասխանեա, թերևս Խաչատուր բարեկամս յանձն առնէր այդ ծանրութիւնն, որով՝ 'ի հարկէ շատ կ'պարտաւորէր ինձ:

Միշտ մտերիմ բարեկամ և խոնարհ ծառայ քու Ռիափայէլ

Դեկ. 9, 1861

Ս. Պ. Բ.

Քու նամակը, ճշմարիտ է, ուշ հասաւ, սիրական Գէորգ, բայց ունեցաւ այնքան ներգործութիւն, որ բաւականին թեթևացուց այն վերահաս վտանգը, որ բոպէից բոպէ պատառուելու էր մեր գլխին. կարճ ասեմ, նամակդ որ ստացայ՝ իսկոյն վազեցի Բլիւմի մօտ, տեսայ որ նա ծախս էր անում մի գնողի հետ որ յայտարարութեան զօրութեամբ եկել էր. բանը քանի մի ոռւրիշի վրայ էր. իսկոյն եկայ ու կանգնեցուցի, ցոյց տալով նամակդ (ներէ), ես ստիպուած էի բանալ պր. Ստեփանեանի վրայ ուղղած, որ մեր բախտից գրած էր ոռւսերէն. նոքա կարծեցին թէ մեր արածը ֆօքուս էր, բայց նա գնաց և իմացաւ որ այդպիսի անձն եղել է և գնացել է): Այժմ վերադարձնում եմ և խնդրում եմ, հինգ որ ստացար նամակդ՝ իսկոյն ստացիր գումարն և ուղարկէ. բայց մի ուղղիլ իմ հասցէովա, ես. տանտիրոջ պարտական եմ ՅՅ մանէթ, շատ կարելի է որ նա կամենայ վրայից առնելու: Ուրեմն ուղղէ Հայոց քահանայի վրայ Եցու Պրեպոդօիօ, Արմ. Цերկви, և եթէ բաց յայդմանէ կարող ես ինձ գնէ 25 մանէթ ուղարկել այն փողից որ

ասար ինձ, իրը թէ ունիս, լաւ կ'անես, Աստուած հաւատացիր,
խիստ պէտք է, Մնամ եղբայրութեանդ խոնարհ

Ռափայէլ.

Պ. Տ. Ես Խզմիրեանցից ոչ մի նամակ չեմ ստացած, Բ' ոչ
նամակի անոնն ես տալիս, չեմ հասկանում:

26 Ապրիլ

Սիրելի եղբայր Գէորգ,

Օրէ օր, ժամից ժամ, չեմ սխալիլ, եթէ ըռպէից ըռպէ ևս
ասեմ, սպասում էի անհամբերութեամբ քու մի երկու առղ
նամակին, քու ուրախալի, գոնէ վճռական երկու խօսքին հա'
կառ չէ'. սպասեցի օր, շաբաթ, շուտով ամիս կ'լինի, 'ի
զուր ակընկալութիւն. դու միանգամայն մոքիցդ հանել ես որ
Բ' ոչ սրտամաշ գրութեան մէջ եմ ես. գուցէ ես քաշուել էի եր-
կար բարակ նամակով յայտնելն քեզ, բայց միթէ դու չի պիտի
լինէիր այդքան սրտագէտ և հոգերան, որ չկարօտէիր երկա-
րապատում նամակի և իմանայիր իմ հոգեոյ վիճակը, երբ
մի կողմից քու արագ նովաստի յոյսը, միւս կողմից տաժանա-
կան ձանձրոյթը Բ' լիւմին ինձ հանգիստ և դադար չէին տա-
լիս: Գէորգ, ինքդ եղիր քու դատաւորը, պիտի՞ հանգստացնէ-
իր, թէ ոչ:

Ոչինչ չեմ ինդրում քեզանից. հմ թէ չէ, այս ինքն 600 մա-
նէթ իմ ըրտինքի և քու ջանքի ճգի վաստակը պիտի կորսնենք
250 մանէթով, թէ պիտի յետ ստանանք: Եթէ ասես թէ թող
կորչէ, զլուխը քարը, հաւատացիր որ գոնէ ես կիմանամ, որ
ոչինչ առանց քեզ իմաց անելու չեմ ձեռնարկել. գոնէ կը մը-
խիթարուիմ, որ անհնարինը հնարաւոր անել իմ թոյլ ուժովն
անհնարին էր, իսկ մարդիկ երեսները դարձուցին օգնելից: Միթէ
այս միիթարութեան և արժանի չիպիտի լինեմ: Շնւտ, շնւտ,
շուտ հասցուր օգնութիւնդ, կամ թէ իմաց արա չէդ:

Անհամբերութեամբ սպասելով երկտող նամակիդ մնամ

սիրող քեզ Ռափայէլ

13 Մայիսի

Սիրելի եղբայր Գէորգ,

Քու միսիթարական նամակը ստացայ. ճշմարիտը պիտի
խոստովանիմ որ գրած էր ճարտասանութեան ամբողջ կա-
նոններովն, որ միանգամայն արդարացուց քու լուրթիւնը, և
ինձ քու առաջ ամօթով ծածկեց: Դու քաջ փաստաբան ես, չեմ


կարող բեղսնից այդ արժանաւորութիւնը խլել. բայց և այնպէս իմ գրութիւնը չթեթևացաւ. Քու պլանները խիստ պատռական են,—մեղք է ուրանալը և մերժելը. բայց այդ պլաններդ կարդալիս խելօք-Դաւիթի մի առակը միտու եկաւ. «Մայր, ասում են երեխէրքը, Գորերս քաղցած է» ։ «Սպասէք բալաներս, տուում է կաթագին, զաւակասէք մայրը, հօրէս ձիւնը կ'հալի, հէրըդ արտ կ'երթայ, կ' վարէ, կ'ցանէ, յետոյ Աստուած ամպից անձրե կ'աղարկէ, ցորենը կ'ծլի, կ'կանաչի. յետոյ Աստուած ոսկի արեին կ'հրամայէ հասնացնելու մեր ցորենը, յետոյ Աստուած պայծառ օրեր կուտայ, կ'երթանք արտ, կ'քաղենք կ'հաճնեք հասկերը, կալ կ'տանենք, կ'կանենք, յետոյ աղօրիք կ'տանենք՝ կաղանք, կ'մաղենք. ալիւրից հաց կ'թխենք ու թեփից մախոխ, կուտանք, կու կշտանք, Աստծոյ փառք կուտանք»։ Լաւ երազ չէ։—

Թողունք այն ազգասիրի օգնութիւնը. ինձ շատ կը պարտաւորես եթէ իմ Վարդանը ուղարկես կուտնկին. թէկ ճշմարիտ է, այնքան չենք ստանալ, բայց ինչ կ'ուզէ լինի՝ փոքր ինչ էլ կ'ստանամ, որով... Ճշմարիտն ասեմ, ես թերահաւատացայ մեր գործոյ վրայ. Ես մտադիր եմ վերջապէս աչքս բանալ և տեսնել իմ երկարատես սխալը».

Դու ինձանից հարցնուու ես խոստովանանք,—ներիր, ես այս տարի չեմ հաղորդվում, Երբ որ դու ինձ չուզացիր ասելու (самосахраненение предъ другомъ!?) ինձ մեղադրողների անունը և նրանց մեղադրանքը՝ ինչ կերպ խոստովանանք ես սպ սսում. Ես չեմ հասկանում. Դու ինձ մի հին, մոռացած, կլսակատար նամակ ևս դրել էիր ծրարիդ մէջ և ուղարկել էիր. ինչու, որ ինձ Գօգըլի խելազարին նմանացնէիր. զարմանալի քնքուշութիւն, որ միայն Քերորին էր վայել. Եղբայր սիրական, եթէ դու որոնում ես իմ վրայ մեղադրանք, ամբաստանութիւն, աւելորդ է նոր ՚ի նորոյ վիրաւորական և կսկծեցուցիչ ստութիւններ հնարելը, ես քեզ կ'ազատեմ այդ աշխատանքից և քեզ միայն 10 կոպէկ կը նստի. մէկ նամակ գրէ Քերորի և Սերորի վրայ և ինդրէ որ նոքա քանի որ տող բան գրեն իմ մասին, և այն ժամանակ յիշոցների ընտիրները դու նոցանից կը լսես, էլ ուր ես ինքու վաստակում։

Իմ վրայ ոչինչ նոր բան չեմ գրում, ամէնը անփոփոխ է, ինչպէս որ էր. տանից դուքս չենողը նոր բան չիմանալ. Բարեկիդ համար քեզ ամենից շնորհակալութիւն և քեզ նոքա շատ բարեկ են ուղարկում։

Հէջուրովին ասա. Նորա Եղբայր Գարրիէլը ստացաւ 120 մանէթ. ինչ արաւ չգիտեմ. ես, թէկ Արշակի ապսպիրանքով



պիտի ստանայի 60-ը, բայց Խարազովը ինձ չի տուաւ, ես քանի անգամ գիր գրեցի և հրաւիրեցի Գարրիէլին իմ մօտ, բայց նա չեկաւ, իղուր է, ուրեմն, Արշակի պահանջմունքը ինձանից ես նորից Ղօրդանեանից օգնութիւն խնդրել չեմ համարձակում, որովհետեւ նա հարուստ տղայ չէ: Մեր պայմանը այնպէս էր որ ես ստանայի Խարազօվէն այն 60 մանէթը, տանէի 50 Ղօրդանեանին և մեկնէի Արշակի դրութիւնը և խնդրէի որ այս անգամ չի պահանջէ իւր պարտքը, և ամենը միասին ուղարկէի Մոսկով: Ես մեղմառը եմ որ ուրիշները այլազգ կառավարեցին:

Գարրիէլ Հէջուրեանին (Մոսկով) շատ շնորհակալութիւն նորա խնդրեքը կ'կատարուի: Պր. Իզմիրեանին շատ բարեւ: Մնամ միշտ պատրաստ քու ծառայութեանը

Ո. Պատկանեան

1860 Մայիսի 23.

Ա. Պ.

Սիրական բարեկամ իմ Գէորգ,

Դու զարմանում ես, թէ ինչու խղուեցաւ մեր թղթակցութիւնը, և ուրիշ պատճառ չգտնելով առզրում ես մեր ծուլութեանը. բայց ես աչ զարմանում եմ այդ բանին և ոչ աշխատում եմ նորա շարժառիթը պտրելու. այդ մի հասարակ և սուկական պատճառէ յառաջացաւ, որ է քու երկարատես բացակայումէն. ես քեզ չէի գրում որովհետեւ չգիտէի թէ ուր ուղղեմ նամակս և որոյ վրայ նշանակեմ հասցէն. իսկ զու... զու չէիր գրում, որովհետեւ ինձնից աւելի մերձաւորք քեզ պատել էին և ստիպում էին ժամանակդ և ստածմունքդ նոցա զոհելու. Բնչ զարմանք: Այժմ որ վերադարձար՝ հոգեւոր գործունէութիւնդ (թերեւա) պահանջեց քեզնէն իմ ներկայութիւնը. ահա ես պատրաստ եմ վերանորոգել մեր սուրբ եղբայրութիւնը:

Հանգամանքս ես հարցնում. ահա համառօտիւ (համառօտիւ եմ ասում, որովհետեւ լիակատարը իմ բերնէն կը լսես երբոր կուգամ այլտեղ մի ամսից). իմ քննութիւնը մինչի վրացոց լեզուն շատ լաւ էր. բոլորիցն 5 ստացայ. վրացերէնէն միայն 2 դրաւ Զուրինովն՝ Քերորի սերտ բարեկամը և ես փոխանակ կանդիդատութեան արժանացայ աւագ ուսուցչի վը-կայականի:

Պօղոսը գրում ես, ինձ վերայ անկատար բաներ է պատ-

առաջ. միթէ Քերորի եղբարց բերնէն լսած կայ մէկ մարդ բարի խօսք. այդ տողմի անդամը մի հրաշալի քանքար ունին չար սուտ խօսելու, մարդու անուն սկզնելու և իւրեանց առժամանակ մի ամենին սիրելի կացնելու. մարդ կարող չէ երկակայելու թէ մինչ մը աստիճան նրբացրել են նոքա կեղծաւորութեան արուեստը. Առաջել զարմանալու կ'լինէր, եթէնա կատարեալ բան ասէր, ոչ իմ, այլ ում և իցէ վրայ. Միթէ, կարծում ես, դու ազատ ես մնացել նոցա դիւական ժանիքներէն. խեղճ միամիտ. Ի՞նչպէս խարեւում ես:

Հարցնում ես՝ ինչո՞ւ չեմ ընծայում Հայոց գրականութեանը մի նոր աշխատութիւն. Արդէն երեքն եմ ըսծայել քու բացակայութեան ժամանակ, որոնցմէ մին արդէն տպեցի և կարծեմ որ այս նամակը ստանալիցդ 6—7 օր անցած՝ կ'ստանաս. բայց այս, ինչպէս ինքդ էլ կ'հասկանաս մեր նորածին տպարանի փորձն է և ոչ նշանաւոր մի բան, թէև ինձ արողներ կան, որ բաւականին գեղեցիկ բան է. Զեռագիրներս ուղարկեցի Հայաստան, որովհետև պահանջել էին մի բանի նոր մարդիկ. Ի՞նչ կը լինի հետեանքը՝ կ'իմանաս, երբ որ նոցանէն պատասխան ստանամ. Առ այժմ ուղարկում եմ ներածութիւնը իմ նոր բանաստեղծութեան, որ տակաւին միայն մտքում է աւարտած. այսքանը կարդալով գուցէ կ'հասկանաս իմ բռնած ճանապարհը ազգային բանաստեղծութեան: Իմ Թօսողլուն Հայ է, բայց ինձ յայտնի պատճառներով նա ուրանում է Հայոց հաւատը: Ես մտադիր եմ գորա մէջ իմովսանն կենդանացնել հայոց անկախութեան դարու վերջին նշոյները. մէլիքներու (որոնք մեր նախարարաց ցոլացած պատկերն են) կեանքը, նոցա առտընին և քաղաքական գործունէութիւնը, նոցա իրար մէջ ունեցած երկպառակութիւնը կամենում եմ ազգիս հասկանալի միջոցովն պատմել նոցա: Քանի որ չէ սկսուել իմ Դիւցազնի վարքը՝ գրէ քու դատողութիւնը այս ներածութեան ոճի և պատմածքի վրայ. այսպէս է խօսում աշուղը, թէ այլազգ: Իմ դիւցազնը իւր նուիրական իդէայի համար զոհում է մարդուս ամենաթանգ սրբութիւնը—կրօնը. գորա մէջ ես ուզում եմ երկու տարերք միաւորել. աստուածատուր քանքարը վեհ հոգի, նուրբ հայրենասիրութիւն և սխալ սկզբունք բարոյականութեան. գորան կանեմ ես գոհ իւր ազնիւ իդէային, միևնոյն ժամանակ չեմ մոռանալ, որ դա 16 դարու որդի է:

Տպարանի վիճակն ցանկանում իմանալ. մամուլը գըրաւումն է 175 մանէթով. իսկ տառերու մէկ մասը՝ 250 մանէթով մի այլ մարդու մօտ է:

Նոր մարդու համար ես հարցնում: Նա այժմ մեծ աղ-

գային ձեռնարկութեամբ է պարապած, որով ՚ի հարկէ պիտի լինի Հայոց Մեկենասը (նը՝ ինչպէս ես. նախանձդ եկամւ նորա վրայ), թէ նա իւր նամակումը խոստանում էր 20 տարի ժամանակ, որ ցոյց տայ ամենուն իւր օդաւաչտութիւնն ազգի համար, այլ 2 տարի չի կայ, որ նա արդէն բացեց իւր ազգա-սիրական սապարէզը. 12,000 մանէթ զոնեց իւր վե՛ գործի և աղնիւ ձեռնարկութեան համար: Ի՞նչ է այդ ձեռնարկութիւնը. կ'հարցնես էրուիր ջգրիցդ, թող երեսդ կնճուռի ներքին վըր-դովմունքէդ, կրծտէ ատոամերովդ, Տպարմն է բանում Հայոց կ'հարցնես: Ո՛չ, առաւել լաւ: Դպրժոց է հիմում խեղճ հայ երե-տասարգներու համար. վեր բարձրացուր: Ուսանողներ է պա-հում իւր հաշով, էլի վեր, էլի լաւ մտածէ: Ա՛րժանաւոր գրքեր է տպում և կամենում է ձրի ցրուել ազգի մէջ. քան զայդ և ա-ռաւել լաւ: Վերջապէս ի՞նչ է այդ մարդու ազգասիրական գործը, հարցնում ես դու անհամբերութեամբ. թատրոն է կամենում հիմել Հայաստանում: Ո՛չ, ոչ, բայց այդ ամենից լաւ և աղնիւ գործ, պատասխանում եմ քեզ: Դէս լսէ:

Մեր... Քերոբը... 12,000 մանէթ... միսեց... և գնեց 15 ձի, 10 դոշկա և բնեց 10 նշանակութիւն և պահում է Վանեաներ, որոնք նորա սպասած 50 տոկոսի տեղ գումարիցն են ուտում. և աշխատանքան փոշմանել է, որ իւր բոլոր զաւեճեի համար պահանջում է 3000 մանէթ և ոչ ոք չէ տալիս: Դորանից էլ վեհ ազգային գործ կարելի՞ էր սպասել մեր ուսումնագէտ Քերոբէն: Այս ազգային աւետիսովն աւարտում եմ նամակու:

Ռապիայէլ

Բ. Տ. Քու նամակը ինձ շատ ուշ հասաւ հոկ. 20 ստացայ իզմիրեանցէն. հասցէս առաջուանն է: Ինմայլ. ոլոկ. 5-այ րո-տի, դ. Մայկովոյ № 12, 1 կառ.

Ընդունում եմ, իմ սիրական եղբայր, քու ազնիւ սիրոյ զեղումը, որ կայանում է քու դէպ ինձ ցոյց տուած զարման-քիդ. զգում եմ, որ խորը ինձ սիրելով՝ իմ տողերն էլ քու աշ-քին զին են ստանում, բայց առաւել թանկ, քան թէ իրօք ար-ժէին նոքա. իհարկէ քու սէրը ծածկում է իմ անթիւ պակա-ստիւներն: Զգիտեմ՝ արդարացի՞ է արդեօք արածդ, թէ ոչ-բայց ինձ այնպէս է թւում ո՞՝ քու խիստ դատմունքը (ամա-չիլով խոստովանում եմ փոքրոգութիւնս) կարող էր վհատեցնե-լու, և ես իսկ և իսկ պիտի զգայի իմ թուլութիւնը որպէս և իցէ գործ կատարելու աշխարհիս երեսին: Կարդացի Սուլթան-Շահէ

կատակերգութիւնը. տեսայ մէջը մի կոպիտ նախանձի արժանաւոր պտուղ. հասկացայ (մեծ խելք պէտք չէր հասկանալու համար) որ նորա գուլ նետերը քու վերայ էին ուղղուած. բայց կասկածում եմ, որ հոգով կոյը կարող է արդեօք բարոյական նետածիդ դառնալու. ես վաղուց գիտէի ձեր յարաբերութիւնը. բայց որ ինչ բամբասանը նորերումս լսայ քու վերայ՝ իմ խելքից բարձր էր. ճշմարիտն ասեմ չէի սպասում, որ այդ աստիճան չարահոգիքը կարող էին հասցնելու իւրեանց լրբութիւնը քու դէմ: Այստեղ, պիտի ցաւելով խոստովանիմ. սողումը քու դէմ շատ բորբոքել է Քերոբ և Սերոբը նորան օգնել և օգնում են, ինչպէս պիտի սպասէիր դու. և կային մարդիկ (անունը չեմ ասիլ քեզ) որոնք գիտէին քու անմեղութիւնը և շատ թոյլ էին արդարացնում քեզ: Ես, ուր որ պատահում էի, զօրութեանս չափ, պատառում էի քու վատարաններուն բերանը. բայց ուր որ իմ ոտքը մուտք չունէր՝ դու մնում էիր անպաշտպան: Առանսարակ՝ ես մի բան եմ նկատել, որ քու բարեկամքը շատ թոյլ և առանց պինդ համոզմունքի մարդիկ են, այդ լաւ իմացիր: Բայց այս ամենը ոչինչ բաներ են, եթէ իմանաս, որ այստեղ դու մի անտես բարեկամ ստացար՝ իմ քեզ նկարագրելովն. իմ աշակերտն հայերէն լեզուի՝ Աղէքս. Ղօրդանեանը (Օֆիցեր Գեներալի աշխատավոր Շտաբա, շտաբս-կապիտան աստիճանով) տեղը մնայ, որ պատուական կրթած (Военная Академия-точно) է աւարտել իւր ուսման ընթացքը), գիտուն, բարեհոգի, ճշմարտասէր երիտասարդ է, այլ և տաք ազգասէր, մարդասէր. և իւր այդ գովանի առաքինութիւններն արդեամք ցոյց է տալիս: Նորա մարդասիրութիւնը չէ խանգարում միենոյն ժամանակ զգուելով նայել թէ Քերոբի, Սերոբի, թէ Նալբանդեանի և թէ Նազարեանի ծուռ ընթացքի վրայ: Իմ պատուածովն նա քեզ այնքան սիրում է արդէն, որ խիստ կամենում է քեզ հետ ի մօտոյ ծանօթանալու. ես նորան ասացի, որ երբ քեզ տեսնէ՝ դէպ ինձ կ'սառի, որովհետեւ ես երբէք չեմ համարձակիլ քու առաքինութիւնը իմի հետ միենոյն կըոի վերայ գնելու... և առաւերորդքեց նորա իշճը քեզ տեսնելու. Առհասարակ, եթէ ուզում ես որ դորան ի մօտոյ ճանաչելու՝ ես քեզ կարճ խօսքով, կ'մեկնեմ դորա ի՞նչ հոգու տէր լինելը: Դա նոր ուղղութեան մարդ է, պարզ, ուղիղ հայեցուածով ներկայ դարուս վերայ. Քօշութիւն, Ժիւլ-Սիմօնին և Հիւգոյին պաշտողը և աշակերտողը. դա ինձ շուտով հասկացաւ և սիրեց՝ իմ պակասութեանցը ներողամիտ լինելով: Թէն հայերէն չգիտէ, բայց Հայոց ընաւորութեանը քաջ տեղեակ է. նորա վափուկ սիրտը շատ ցաւում է, մեր առաջաւոր (quasi) հայերու ծուռ ուղղութեանն ատող է. Սեպտեմբեր, 1905.

սիրում է միամիտ ժողովուրդը, ատում է նորա փթած գլուխ-ներուն։ Այսպէս է մեր ընդհանուր բարեկամը։ Այս, իմ սիրական Գէորգ, մենք, այսինքն մեր ուխտը, թուով սակաւ է։ Դու, Մնացականը, Նօրդանեանը, Ամբարդանեանը և ձեր ամենիդ խոնարհ ծառան, բայց ցնյոց տուր ինձ այսպիսի ժողով, որ աւելի սիրու և ազնիւ սիրով կապուած լինի, քան թէ մենք. Թու ենք, ճշմարիտ է, բայց ժամանակաւ մեծ յոյս կայ, որ մենք մեծ աղդեցութիւն ունենալու ենք աղդի բարոյականութեան վրայ մեր վարքով և անձնուէր գործով։ Նօրդանեանը ասում է պէտք չէ մեր ուխտը մտցնել ամենային օյին մարդիկ. համախոներ պարել պէտք չէ. եթէ լաւ մարդիկ կան՝ նոքա մեղ կ'որոնեն։ Առհասարակ՝ դա շատ խելօք և հեռատես երիտասարդէ է. թէս տարիքով 24 ամեայ է։ Դէմքը քաջառողջ, ձայնը ուժեղ, մարմնոյ կազմուածքը—պարթևի, խոշոր աչքերով, թաւ ունքերով, երեսի տիպարքը բուն հայի. բարոյականութիւնը մաքուր և կուսական. միով բանիւ։ Ինձէն շատ գոհ կ'լինիս այս գիւտիս համար։—Մեր պըր. իզմիրեանը շատ հակամիտ է դէպի նազարեանցի ուղղութիւնը, և մեր վրայ միայն ներողամիտ աչքով է նայում, և այդ բղխում է նորա բնածին բարութենչն. այս ինչ մեր ոսպիներուն համոզմունքով յարգում է։

Այս ինսդիրը երկար մեկնութեանց է կարօտ։ Դու գրում ես թէ միտք ունիս շուտով գալու. ես ևս եկած շաբաթ մտադիր էի գալու այդտեղ. ուրեմն դու սպասէ մեզ և յետոյ մենք (այսինքն ես և Նօրդանեանը) կը բերենք քեզ մեր մօտ։ Բայց յառաջ քան թէ. ես ոսս Պետրուրդէն դուրս կ'դնեմ՝ դու ինձ մի փոքրիկ, ներէ, ուզում էի ասել՝ մեծ, զոհ բեր, որ ես քեզ յետ կ'դարձնեմ նոյն հետ այն։ Միւս շաբաթ օրուան, այսինքն 17-ին ամսոյս, եթէ կարող ես ուղարկէ, եթէ չես կարող՝ գըէ իզմիրեանին, որ ինձ 60 մանէթ տայ. ես քեզ չեմ գրում պատճառը, որ քեզ չերեխ սրտաշարժ. յուսամ որ մեր մէջ հաշիւ հարցնելը աւելորդ է. և մանաւանդ կ'իննդրեմ քեզ իզմիրեանցին մի ակնարկիր, որ յատկապէս ինձ համար է, այլ հասկացներ որ առաւել քու պիտոյից համար է. և պատճառը միւս նամակումս կը յայտնեմ։ Խնդրեմ, նախ ներէ ինձ այդ վստահութեանս քու վրայ, և երկրորդ՝ իմ պատճառ չյայտնելում. առաջինը քեզ պատիւ է, երկրորդը ինձ անպատւութիւն չէ, կարծում եմ։

Ուրեմն շաբաթ ես կ'ստանամ նշանակած գումարն, և երկուշաբթի, այս 19-ին ճամբայ կը նկնենք, և գուցէ 3—4 օր մնանք։ Երկար նամակ էիր պահանջում. ներէ, ես քեզ երկար

բաներ ունեմ պատմելու. ուրեմն այժմուայ լոելս քեզ կը վարձատրեմ շուտով քանի մի օրից:

Եթէ Փանեանին տեսնես, ասա որ ինձ ուղարկէ Հայաստանի աշխարհացոյցը և տաճկերէնից 'ի հայ բառարանը, որ էնֆիազնանցինն է. ևս արդէն վճարել եմ նոցա գինն 5 հատ տաղարան աւելորդ տալով (Դզմիրեանցի հրամանաւ 200 հատ տուել էի): Նազարեանցին ուղարկել էի քանի մի ոտանաւոր, որ նա չի տպեց, եթէ դիպուած ունիս նորան տեսնելու կամ ձեզնէն մէկը՝ առէք, ինդրեմ, իմ Մ'րուս անունով պարերգութիւնս (బալլադա): Յուսամ որ դու իմ խնդիրքը կ'կատարես, ինչպէս և ես պատրաստ եմ քուները կատարելու:

Օւափայէլ

Անցեալ նամակիս մէջ ես դրել էի 4—5 ոտանաւոր նոր մարդու դէմ. պր. Վարդազարդեանը խորհուրդ չէ տուել իզմիր-եանին քեզ ուղարկելու, որ, կարծում եմ, վերջնինի մօտ է մնացել: Զարմանք բան. կան մարդիկ, որոնք այն կարծիքի են, որ մարդ իր սերտ բարեկամէն եա գաղտնիք պիտի ունենայ:

Զեր ընկերութեանը շատ բարեւ է հեջուրեանին ասա, որ
նորա փոքրիկ գրքոյկը շատ հաւանեցայ սիրուն միլայ, ա ոք կր-
սիվայ.—գեղեցիկ) աշխատութիւն է. բայց այդ դիպուտածով ես
նորան քանի մի պիտանի խորհուրդներ տայլու եմ:

Խնդրեմ, նամակդ իմ վրայ ուղղէ. քու նամակը ստացա
-8թէ 10օրից: Իզմայլ. քու 5-այ ռոտ, № ճ. 12 № կ. 1,
այսպէս է հասցէ: